

ՄԱՅՐ ԸԹՈՌԼ ՍԴԻ ՄԵԶ Է

Մայիսի 9: Կիրակի առավոտ է: Կայծակի արագությամբ տարածվում է գուցիք: Մանր հիվանդությունից հետո, 86 տարեկան հասակով, ի Տեր Հանդիպավ Տ. Տեղորդ Զ. Վեհափառ և Մրացնագույն Կաթողիկոսը: Լուրջ շանթում է և քարացնում յուրաքանչյուրին: Բոլորի ուղեղներում մեւպավամ է մի միտք՝ այլքա չկա Գեղորգ Զ.զ. Ամենայն Հայոց հայրենասեր ու մեծագործ Հայրապետը:

Կիրակի առավոտյան ժամերդությունն է գնում Մայր Տաճարուա: Վանքի բակը լցրել է ժողովրդի խուռաներամ ամրախը: բոլորի գիմքերին վիշտը իր խոր, անջնջելի կնիքն է դրել, շատերը տաղղակի հեկեկուամ են, խոսակցությունները շշնչոց են, ոչ մի ուրախ ձիչ, ոչ մի բացագանցություն, բայց են լրջտալի լուրք...: Ու խիռուած են Մայր Տաճարի զանգերը, հատ-հատ, սպավոր ու տրտում և իրենց տիսուր, կերկերում թրթուցներով գուժում Վեհափառի մահը: Դրանք զանգի մառն, անկյանք հնչյուններ չեն, այլ սպավոր սրտի տրտում աթափիծ հեկեկոցներ: Այո՛, սպում է, սպի մեջ է Մայր Աթոռ Ս. Եղմիածինը, Հայոց Առաքելական Եկեղեցին արժանապես սպում է կուսավորչի արժանընտիր Դահակալի անդարմանելի կորուստը:

Կեսօրին Տաճարուամ սկսվուամ է պատարագը: Ամերուվ է պատած Կաթողիկոսական Գահը, սեռվ է ծածկված Ավագ սեղանը, սպում քողով է պատված Ս. Եղման սեղանը:

Մեղմորեն առկայժուամ են մոմերն ու կանթեղները: Արծաթի բուրմառը խնկարուց անուշահուտուամ է տարածուամ օրուա: Դպիրները երգում են ավելի քան մեղմօրոր ու սպալից: Տաճարը լի է բազմությամբ: Տեղ չկա շարժվելու:

Մի պահ խորանի վարագույրը փակ է, պատարագից սուրբ սպասն է տեղավորում:

Ներքեցից երգում են «Յորժամ»ը: Որքան թախիծ, որքան միստիկական վերացում կա այդ երգի մեջ: «Յորժամ» մտցես ի սուրբ խորանն, անդ յիշեացես զմեր ննջեցեալսն: Երգի տրտումաթախիծ հնչյունները թրթուամ են հնագարյան Տաճարի խնկաբույրը կամարների տակ և համուամ յուրագանցուրին, մեետուամ դարձնուամ արտահայտությունները: Մարդկանց միտքը շի ուզուամ հաշուվել ծանր կորատի հետ: ուղեղը մի բոպե նուզիսկ չի ուզուամ մտածել այդ մասին, բայց Վեհափառի մահը համառորեն մեխսվուամ է ուղեղուամ, լեցնուամ մարդկանց ամբողջ գիտակցությունն ու այլես գտաված արտասուզները դառնուամ են հեկեկանք, արցումքի ծով:

Սուրբ պատարագը շարդանակվուամ է: Պատարագի հայրը առաջին անգամ հիշուամ է անրջանկայիշատակ: Հայրապետն Առենայն Հայոց...: Սարկավագները քարոզուամ են՝ ակամ հանգուցեալ Հայրապետին մերոյ...:

Հայ Եկեղեցին որբացել է, չկա այլն իր հոտի արթուն Դիտապետն ու Հովհապետը, բոլորի կողմից սիրված Հայրն ու խնամակալը, պաշտպանն ու զորավիզը: Մեծ է վիշտը ու անպարհակելի:

Սուրբ պատարագը մուտենուամ է իր ավարտին ու դպիրները երգում են հայոց պատարագի տիսուր ու տրտումաթախիծ «Տէ՛ր, ողորմեան»: Ու այդ պահին, Հայոց պատարագի լացի ու սպի այդ տիսուր ժամին, Հայ տառապած հոգիները անցյալի հեռավոր, մշտաշապատ, սևակնած երկնքից, նորից իշնուամ են մեր հոգիներին ու պատմում Հայի անցյալի դարավոր վշտի մասին:



Սուրբ պատարագը վերջացել է, Ս. էշմանի միաժամկետ միաբանությունը, հայրակորուս, սպավոր ու տխուր, շրջապատել է Ս. էշման սեղանը:

Հոգեհանգստյան արարություններից առաջ գերազնորհ Տ. Սահակ Եպիսկոպոսը, գավազան ու խաչ ձեռքին, հայրանում է հավատացյալ հայ ժողովորդին Վեհափառ Հայրապետի մահվան մասին. «Ձկա՞ մեր ամենքիս սիրելի ու պաշտելի Հայրը, հավիտենապես իր աշքերը փակեց Գեորգ Զ. ը, ազգիս մեծագործ ու հայրենասեր Հայրապետը...»: Արցոնքները խեղում են նրան, այնևս անկարող է խսունել: Եվ այդ լացը վարակում է բոլորին: Տաճարը լցվում է հառաջանքով: Կատարվում է առաջին անգամ Հոգեհանգստ՝ Վեհափառ Հայրապետի հոգու համար:

Երեկոյան ժամերգությունից հետո դարձյալ կատարվում են հոգեհանգստյան արարություններ:

Ուշ երեկո է: Հավատացյալների բազմությունը շի հեռանում վանդի բակից: Սպասում են բոլորը՝ թե երբ պետք է հանգուցյալ Հայրապետի մարմինը տեղափոխվի Վեհանան:

Վեհափառ Հայրապետը, նախքան իր մահը, տառապերով ծանր հիվանդությամբ, տեղափոխվել էր Երևան և ուստուրիկայի լավագույն բժշկական ուժերի հսկողության տակ, ամեն տեսակ հարմարություններով հանդիր, պառկած էր Երևանի բուժարան-Հիվանդանոցներից մեկում: Վեհափառին ապաքինելու համար տրամադրված էին Մոսկվայի և Խարկովի լավագույն բժշկական ուժերը:

Ուշ գիշեր է և ահա Մայր Տաճարի զանգերը հառաջանքով խփում են և մութ գիշերը ավելի տխուր ու սփալի դարձնում:

Հանգուցյալ Հայրապետի մարմինը, բժիշկների հսկողությամբ և միաբանների ուղեկցությամբ Երևանից տեղափոխվում է Մայր Աթոռ՝ Վեհարան: Թաղումը որոշված է մայիսի 27-ին, բժշկական ամեն տեսակ միջոցառումներ են կիրաված Հանգուցյալ Հայրապետի աճրունը պահպանելու համար:

Մայր Աթոռի միաբանությունը հակում է մինչև լուս Վեհափառ դարձնում:

Սահմանվում է կարգ — ամեն օր կեսօրին և երեկոյան կատարել հոգեհանգստյան կարգ՝ Տաճարում: Կեսօրվա հոգեհանգստից հետո Մայր Աթոռի եպիսկոպոսուները, վարդապետներն ու քահանաները պետք է Վեհարանում ամեն օր շրջա ավետարաններից ընթերցնեն, իսկ ամբողջ գիշերը մինչև լուս սարգավաճներ, ըստ սահմանված հերթի, պետք է հակեն և սաղմու քաղեն:

Մյուս օրը, մայիսի 10-ին, ցերեկվա ժամը 12-ին, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, սղո պատշաճավորությամբ զգեստավորված, խաչվառվ, վառ կերպներով, թափոր կազմած, ունակիզբան Աստուածա շարականի տրտմագին հնչումների տակ, շարժվում է Վեհարան: Հայրապետի մարմինը դրված է Սաղկյա դահլիճում, Հայրապետական Գահին հանդեպ: Կատարվում է հոգեհանգստը: Թախիծն ու վիշտը մղձավանչի ծանրությամբ իշել է դեմքերին:

Կնքուակի կապտավուն մշուշը ոլորապտուս բարձրանում է դեպի Սաղկյա դահլիճի նկարազարդ առաստալլը: Դահլիճի պատուհաններից, թափե վարագույրների արանքով, շեղակի ներս են ընկնում մայիսյան արեգակի վառ ճառագայթները, իրենց հետ բերելով մի տեսակ կինսալից, խաղաղ անդրդություն: Ննջում է Վեհափառը մահվան խաղաղիկ ու անվրդով քնով: Վերջացել են հոգեհանգստյան սրբազնան ու մեղամաղձիկ արարուղությունները, լոել են վերջին հնչումները: Բոլորը լուս ու գլխիկոր սպասում են. ոչ ոք չի տագում թողնել ննջեցյալի սենյակը, բարացել, մագնիսացել են տեղերուած: Ու այդ անդրդոր, մեռելացին լուսվյան մեջ, կարծես հավիտենական խաղաղությամբ Վեհափառ Հայրապետի հոգին ունկնդրում է: Իր սիրելի միաբաններին և մի ակնթարթ աներեկութանում է մահը: Թոլորի աշքի առցկ կենդանանում, պայծառանում է Վեհափառի հոգեհան անաղարտ պատկերը և ոգեկոչում հոգիներին աշխատանքի ու պայքարի, սիրու և խաղաղության մեծ գործի համար:

